

Հաստատված է

ՀԽՀԿ-ի գործկոմի նիստում

## ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

### Համահայկական Ձմեռային Խաղերի Կանոնակարգ

#### Հիմնական դրույթներ

##### 1. Համահայկական Ձմեռային Խաղերի Կանոնակարգ

Համահայկական Ձմեռային Խաղերի սույն Կանոնակարգը մանրամասնում է Համահայկական Ձմեռային Խաղերի անցկացմանը վերաբերող Կանոնադրության դրույթները: Այն ընդգրկում է Խաղերի ծրագիրը, մրցումների կանոնները, Խաղերին մասնակցելու համար հավատարմագրման դիմումների ներկայացման կարգն ու ժամկետները, Խաղերի հանդիսավոր բացման և փակման արարողությունները, Խաղերի խորհրդանիշի օգտագործման իրավունքին և գովազդին վերաբերող դրույթներ, ինչպես նաև այլ դրույթներ:

Որոշ շեղումներ Կանոնակարգից հնարավոր են միայն այն չափով, որքանով այն արձանագրված է Համաշխարհային կոմիտեի և հերթական Համահայկական Խաղերի կառավարական Կազմկոմիտեի միջև կնքված համաձայնագրում:

##### 2. Համահայկական Ձմեռային Խաղերի մասնակիցները

2.1 Համահայկական Ձմեռային Խաղերին մասնակցում են աշխարհի քաղաքների հավաքական թիմերը:

2.2 Հայկական ազգային անձնագրեր ունեցող բոլոր քաղաքացիները կարող են մասնակցել Խաղերին:

2.3 Ցանկացած երկրի քաղաքացի կարող է մասնակցել Խաղերին, եթե նա`

հայկական ծագում ունի հոր և մոր կողմից,

հայկական ծագում ունի միայն հոր կողմից,

հայկական ծագում ունի միայն մոր կողմից՝ հետևաբար չունենալով հայկական ազգանուն,

ամուսիններ, որոնք ամուսնությունից հետո վերցրել են հայկական ազգանուններ:

2.4 Քաղաքների մարզական պատվիրակությունների ղեկավարները պատասխանատու են այդ կանոնների կատարման համար:

2.5 Քաղաքի մարզական պատվիրակության կազմում այս կամ այն մարզիկին ընդգրկելու հիմնավորման համար մասնակիցը պետք է իր հետ ունենա ազգային անձնագիր կամ այն երկրում մշտական բնակության թույլտվություն (օրինակ՝ այսպես կոչված 'Green Card'), որտեղ գտնվում է խաղերին մասնակցելու ցանկություն հայտնած քաղաքը:

Ծանոթություն. Վերը նշված դրույթները չեն վերաբերում մարզիչներին և մրցավարներին, որոնք կարող են լինել քաղաքացիությամբ կամ ծագումով ոչ հայ:

### 3. Տարիքային սահմանափակումներ

3.1 Համահայկական խաղերի մասնակիցների համար չկան տարիքային սահմանափակումներ, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է Միջազգային ֆեդերացիաների կանոններով:

### 4. Բժշկական պայմաններ

4.1 Համահայկական խաղերին յուրաքանչյուր մարզիկ մասնակցում է սեփական պատասխանատվության, ռիսկի և վտանգի գիտակցությամբ:

4.2 Համահայկական խաղերի մասնակիցները պարտավոր են ունենալ իրենց հետ ապահովագրության վկայական խաղերի ողջ ժամկետի համար:

### 5. Հավատարմագրման դիմումների ընդունման կարգն ու ժամկետները

5.1 Համահայկական խաղերի մասնակցության նախնական հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Համահայկական խաղերի Համաշխարհային կոմիտեի Քարտուղարություն մինչև 2013 թ.-ի հոկտեմբերի 31-ը՝ նշելով մարզաձևերը (առանձին կանայք և տղամարդիկ) և մասնակիցների թիվը:

5.2 Համահայկական խաղերին մասնակցության վերջնական անվանական հավատարմագրման դիմումներն անհրաժեշտ է ներկայացնել մինչև խաղերի անցկացման տարվա դեկտեմբերի 15-ը: Հավատարմագրման դիմումները կհամարվեն անվավեր, եթե ներկայացվեն նշված ժամկետից հետո:

5.3 Բացառությունները կարող են քննարկվել և ընդունվել միայն Համաշխարհային կոմիտեի Գործկոմի կողմից:

6. Մասնակցության իրավունքը

Մարզական պատվիրակության յուրաքանչյուր անդամ ստանում է մասնակցի անցագիր (badge):

7. Համահայկական Ձմեռային խաղերի ծրագիրը և մրցումների կանոնները

7.1 Համահայկական խաղերի ծրագրում ընդգրկված են 4 մարզաձևեր`

7.2 հոկեյի մրցումները թիմային մրցումներ են:

7.3 դահուկի, լեռնադահուկի և սնոուբորդի մրցումներն անհատական մրցումներ են:

7.4 Յուրաքանչյուր մարզաձևի մրցումներն անցկացվում են համապատասխան Միջազգային մարզական ֆեդերացիայի կանոններով` ներառյալ այն լրացումները, որոնք կատարվել են Համաշխարհային կոմիտեի կողմից` նշված կանոնները հարմարեցնելով Համահայկական խաղերի պայմաններին:

8. Թիմերի կազմը և մասնակիցների թիվը

8.1 հոկեյ (տղամարդիկ):

Թիմի կազմը` 22 մասնակից, այդ թվում 20 մարզիկ և 2 պատասխանատու անձ:

Ծանոթություն.

ա) այն մարզիկները, որոնք ունեն արհեստավարժի լիցենզիա, չի թույլատրվում մասնակցել Համահայկական խաղերի հոկեյի մրցաշարին: Բացառություն են կազմում միայն այն արհեստավարժ մարզիկները, որոնց տարիքը 36 և ավելի է;

8.2 Դահուկ (կանայք և տղամարդիկ):

Ծրագրում ընդգրկված են`

Կանայք` 5 կմ դասական ոճ

Տղամարդիկ` 10 կմ դասական ոճ

8.3 Լեռնադահուկ (կանայք և տղամարդիկ):

Ծրագրում ընդգրկված են`

Կանայք` հատուկ ոլորավայրէջք, հսկա ոլորավայրէջք

Տղամարդիկ՝ հատուկ ոլորավայրէջք, հսկա ոլորավայրէջք

8.4 Մտուբորդ (կանայք և տղամարդիկ):

Ծրագրում ընդգրկված են՝

Կանայք՝ հատուկ ոլորավայրէջք, հսկա ոլորավայրէջք

Տղամարդիկ՝ հատուկ ոլորավայրէջք, հսկա ոլորավայրէջք

8.5. Բացառությունները կարող են քննարկվել և ընդունվել միայն Համաշխարհային կոմիտեի Գործկոմի կողմից:

9. Խաղերին մասնակցող քաղաքների միջև խաղարկվող մեդալների քանակն ըստ մարզաձևերի

9.1. Խաղարկվող մեդալների քանակը

Մարզաձևը Ոսկե Արծաթե Բրոնզե

Հոկեյ 1	1	1	
Դահուկ	2	2	2
Լեռնադահուկ	4	4	4
Մտուբորդ	4	4	4

10. Համահայկական Ձմեռային Խաղերի հանդիսավոր բացման արարողությունը

10.1 Մասնակից քաղաքների պատվիրակությունները անցնում են համապատասխան քաղաքի ցուցանակի անվանամամբ (հայերեն և անգլերեն լեզուներով) և քաղաքի դրոշի հետևից:

Երթի ոչ մի մասնակցի թույլ չի տրվում կրել երկրի ազգային դրոշը՝ քաղաքի դրոշի փոխարեն կամ դրա հետ միաժամանակ: Բացառություն կարող են լինել փոքրիկ ազգային դրոշակները մարզիկների ձեռքերին, որոնց չափսը չպետք է գերազանցի 20 սմ:

10.2 Մասնակիցների մարզական համազգեստների վրա, որոնք կարող են կրել քաղաքի պատվիրակության խորհրդանիշը, ինչպես նաև Համահայկական Խաղերի խորհրդանիշը, թույլատրվում է հովանավոր-ֆիրմայի անվանումը:

10.3 Սփյուռքի մարզիկը բոլոր մարզիկների և Երևան քաղաքից մրցավարը բոլոր մրցավարների անունից երդում են տալիս (այդ մարզիկին և մրցավարին ընտրում է Համաշխարհային կոմիտեի Գործկոմը):

Բարձրացնելով աջ ձեռքը՝ մարզիկը արտասանում է հետևյալ խոսքերը.

‘Բոլոր մասնակիցների անունից երդվում եմ, որ Համահայկական \_\_\_\_-րդ խաղերին կմասնակցենք՝ հարգելով և ենթարկվելով գործող մարզական կանոններին, համաձայն մարզական ոգու, հանուն սպորտի պատվի, մասնակից քաղաքների, հայ ժողովրդի և մեր հայրենիքի՝ Մայր Հայաստանի փառքի’:

Մրցավարը բարձրանում է ամբիոնին և նույն կերպ արտասանում մրցավարական երդման հետևյալ խոսքերը.

‘Բոլոր մրցավարների անունից երդվում եմ այս խաղերը դատել լիովին անկողմնակալ՝ հարգելով և ենթարկվելով գործող մարզական կանոններին, համաձայն մարզական ոգու, հանուն սպորտի պատվի, մասնակից քաղաքների, հայ ժողովրդի և մեր հայրենիքի՝ Մայր Հայաստանի փառքի’:

11. Համահայկական խաղերի մրցանակակիրների պարգևատրման արարողակարգ

11.1 Խաղերի հաղթողների և մրցանակակիրների պարգևատրման արարողությունը տեղի է ունենում մարզաձևի ավարտից անմիջապես հետո: Հաղթողները և մրցանակակիրները պարգևատրվում են համապատասխան մեդալներով և հավաստագրերով, կին մրցանակակիրներին հանձնվում են նաև ծաղիկներ:

11.2 Ստորև ներկայացվում է մեդալների քանակը, որոնցով պարգևատրվում են խաղերի հաղթողները և մրցանակակիրները՝ հաշվի առնելով թիմերի անդամների քանակը տարբեր մարզաձևերում:

Մարզաձևը	Ոսկե	Արծաթե	Բրոնզե
----------	------	--------	--------

Հոկեյ	21	21	21
-------	----	----	----

Դահուկ	4	2	2
--------	---	---	---

Լեռնադահուկ		6	4	4
-------------	--	---	---	---

Մնողբորդ	6	4	4
----------	---	---	---

Ընդամենը՝		37	31	31
-----------	--	----	----	----

11.3 Գավաթների քանակը և տեսակները:

Համահայկական խաղերի գավաթով պարգևատրվում է հոկեյի թիմը:

Հատուկ գավաթներով պարգևատրվում են ‘Լավագույն պատվիրակության համար’, ‘Արդարացի խաղի համար’, ‘Մարզական ոգու և համբերության համար’, ‘Համահայկական խաղերի հայտնություն’, ինչպես նաև ‘Համահայկական խաղերի գեղեցկուհի’ մրցույթների դափնեկիրները: